ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 01.12.2021թ. N 905/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստը տեղի ունեցավ 19.01.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գրիգորյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ռ.Կուսիկյանը, Լ.Նալբանդյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7 ծածկագրով գնահատող հանձնաժողովի նախագահ Ռ.Գրիգորյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. թիվ-2 որոշմամբ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն ճանաչվել էր ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից և սահմանված անգործության ժամկետը լրանալուց հետո պայմանագիր կնքելու համար գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցին էր ներկայացրել պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը: Սակայն ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումը:
Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 9.3 կետի՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:
գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7 ծածկագրով գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ/ ենթակետի համաձայն՝ ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին, տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գրիգորյան

Անդամներ՝ Ռ.Կուսիկյան

Լ.Նալբանդյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան